

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Լիլիթ Գալստյանի, Անահիտ Բախշյանի և Արտյոշ Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

- 1-ին հոդվածի 2-րդ մասում «տասնմեկ» թիվը փոխարինել «տասնվեց» թվով:
2. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝ 1-ին հոդվածի՝
 - 1) 1-ին մասում «կետում» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառով.
 - 2) 2-րդ մասում «կետը» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասը» բառով.
- 3) 1-ին հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է վերանայել:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Հայտնում ենք նաև, որ օրենքի նախագծի ընդունմամբ անհրաժեշտություն է առաջանում համապատասխան լրացումներ կատարելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման մեջ: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը կընդունվի օրենքի նախագծի ընդունումից հետո մեկամսյա ժամկետում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը առողջապահության բնագավառի
վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**<<<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի՝ սոցիալական
պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

<<<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագծի)՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1 և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի <<Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաօլորտների բնութագրիչները հաստատելու մասին>> թիվ 34-Ա/1 հրամանի համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծն ունի չեզոք ազդեցություն:

**ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանազատում է մտցվում պետական ուսումնական հաստատության մեկ դրույքով և կես դրույքով պաշտոնավարող վարչական աշխատողների համատեղության կարգով դասաժամերով ծանրաբեռնվածության աստիճանների միջև:

Նախագծի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում ապրանքային շուկաների հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային միջավայրի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<< Հանրակրթության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1.<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

“Հանրակրթության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

“Հանրակրթության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը կամ չընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրակրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում» լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրակրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում» լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է պետական ուսումնական հաստատությունում կես դրույքով պաշտոնավարող և համապարասխան որակավորում ունեցող վարչական աշխատողի աշխատաժամանակին,* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում:*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ****«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին**

Հոդված 1. «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի՝

1) 4-րդ կետում «հաստատության» բառից հետո լրացնել «մեկ դրույքով պաշտոնավարող՝ բառերը:

2) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«Կես դրույքով պաշտոնավարող եւ համապատասխան որակավորում ունեցող պետական ուսումնական հաստատության վարչական աշխատողը համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչեւ տասնմեկ դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն՝:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Օրինագծի ընդունման հիմնավորում

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2009 թ. հուլիսի 10-ին: Այն սահմանում է հանրակրթության համակարգի պետական քաղաքականության սկզբունքները, կարգավորում ոլորտի կազմակերպարարական ու ֆինանսատնտեսական հիմքերը, սահմանում հանրակրթության գործընթացին մասնակից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավահարաբերությունները:

Գործող օրենքի 25-րդ հոդվածը թույլ է տալիս պետական ուսումնական հաստատության վարչական աշխատողին համապատասխան որակավորման դեպքում համատեղության կարգով շաբաթական ունենալ մինչեւ ութ դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն (ուսուցչական մեկ դրույքը 22 դասաժամ է): Ըստ էության օրենքը չի նախատեսում կես դրույքով պաշտոնավարող վարչական մանկավարժական աշխատողների իրավունքները: Այսօր, սակայն, ոլորտում շատ են այն վարչական աշխատողները, որոնք կես դրույքով են պաշտոնավարում եւ, փաստորեն, սահմանափակում է նաեւ ուսուցչի կես դրույք ծանրաբեռնվածություն ունենալու իրավունքը: Խնդիրը մի շարք դեպքերում կարգավորվել է ՀՀ ԿԳ նախարարի կարգադրություններով: Սակայն հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի բացառապես օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմաններն ու կարգը՝ կարծում ենք խնդիրը օրենսդրական կարգավորման դաշտում է:

Համոզված ենք, որ սույն օրենսդրական նախաձեռնությամբ կես դրույքով պաշտոնավարող եւ համապատասխան որակավորում ունեցող վարչական մանկավարժական աշխատողների համար սահմանելով շաբաթական համատեղության կարգով մինչեւ տասնմեկ դասաժամ (կես դրույքի չափով) ուսումնական

ծանրաբեռնվածություն ունենալու իրավունք՝ ապահովված կլինենք արդար պայմանների եւ հնարավորությունների սկզբունքը: